

# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 Թ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Ապարան համայնքի 2023 թ բյուջեն մշակվել է՝ ելնելով համայնքում առկա խնդիրների լուծման հրատապությունից և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունից: Համայնքի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բյուջետային գործընթացի օպերատիվ կազմակերպումից, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների օպերատիվ հաշվառման, հաշվարկային եկամուտների ճշգրտության ապահովման և դրանց հավաքագրումից, ինչպես նաև հավաքագրված միջոցների ճիշտ, արդյունավետ ու նպատակային օգտագործումից:

Մեր նպատակն է՝ բյուջեի միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմամբ հետևողականորեն ապահովել համայնքի կենսագործունեության բնականոն ընթացքը, նաև՝ համաչափ զարգացումը: Խնդիրը կարևորվում է հատկապես 2023 թ-ին, երբ համայնքին հատկացվող դոտացիայի գումարը նվազել է շուրջ 4,1%-ով, կատարվել է նվազագույն աշխատավարձի բարձրացում, առկա է ապրանքների զգալի գնաճ: Այդ ամենը պահանջում են առավել լարված, հետևողական ու տքնաջան աշխատանք:

2023 թ բյուջետային տարում համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Ապահովել համայնքի կենսագործունեության բոլոր օղակների դիմանիկ զարգացումը՝ ապահովել համայնքապետարանի և ՀՈԱԿ աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը:
- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացմամբ, ճշտել և թարմացնել հարկային շտեմարանները՝ կատարելագործելով անշարժ գույքի հարկադրման միասնական քաղաքականության կիրառման ուղղությամբ տարվող աշխատանքները, իրականացնել տեղական հարկերի, տուրքերի և վճարների, ծառայությունների մատուցման վճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն:
- Բարելավել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մակարդակը:
- Աշուժացնել համայնքի կրթական, մշակութային, մարզական և հասարակական կյանքը, նրանցում լայնորեն ներգրավելով ավելի մեծ թվով երիտասարդների: Կապիտալ ներդրումներ կատարել նախադպրոցական, մշակութային, մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և նորերի ստեղծման ուղղությամբ: Արագած և Շենավան գյուղերում կառուցել մանկապարտեզի շենքեր:
- Իրականացնել համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել բնակարանային- կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային պայմանների բարելավման, բնակավայրերի բարեկարգման, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման և վիճակի բարելավման բնագավառներում:
- Ապահովել 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի 38, քանդված կամ քանդման ենթակա՝ 2 և զոհվածների 3 ընտանիքների, ընդամենը՝ 43 ընտանիքների, նորամուտը նորակառուց բնակելի շենքում:
- Նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, գյուղատնտեսության արդիականացմանը:
- Կառուցել և վերանորոգել ոռոգման և խմելու ջրերի սպասարկման համակարգերը, բնակչությանը ապահովել մաքուր և որակյալ խմելու ջրով:
- Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Եղիպատրուշ գյուղը գազաֆիակացնել:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, նպաստել վետերանների, զոհվածների ընտանիքների, հաշմանդամների, սոցիալապես խիստ անապահով ընտանիքների, ծերերի կյանքի պայմանների բարելավմանը: Բնակավայրերում ստեղծել բնակչության սպասարկման և զբաղվածության կենտրոններ:
- Դոնոր կազմակերպությունների միջոցով համայնքում ապահովել լրացուցիչ ներդրումներ:

Նպաստել համայնքի Լուսագյուղ, Եղիպատրուշ և Վարդենուտ գյուղերի վարչական տարածքներում ձմեռային սպորտի զարգացման ուղղությամբ ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Ապարան քաղաքը և 21 գյուղերը պետք է դառնան ապագայի բնակավայրեր : Բոլորիս ջանքերը, հնարավորություններն ու ուժերը պետք է ուղղված լինեն՝ աշխատանք՝ Ապարանի տարածաշրջանի զարգացման և շենացման համար, աշխատանք՝ ապարանցու բարեկեցության համար, աշխատանք՝ Ապարանը արժանապատիվ համայնք դարձնելու համար

Դիմում եմ համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2023 թ բյուջետային միջոցների ապահովման, դրանց նպատակային ու խնայողաբար օգտագործման և բյուջեի կատարման ու վերահսկման ուղղությամբ: